

Թիւ 3171

Յունուար 28, 1958

Հոգեշնորհ
Տ. Վաչէ Արղ. Յովսէփեան
Նախագահ Մխական Խորհուրդի
Ս. Խաչ Եկեղեցւոյ
Եռնիբն Սիթի.

Սիրելի Հայր Վաչէ,

Այսու կը յայտնենք, թէ Թեմական Խորհուրդը իր վերջին
Նիստին մէջ թերի գտնելով Ձեր տարեկան Մխական Ժողովի ընտրութեան
տեղեկագիրը՝ չվաւերացուց կատարուած ընտրութիւնը:

Կը յանձնարարենք որ առաջին առիթով մեզի դրկէք ծխական
տեղեկագիրի օրինակը, ինչպէս նաեւ ուրիշ պաշտօնադրով մը տեղեկացնէք
թէ Ձեր տարեկան Մխական Ժողովին քանի Հոգի ներկայ էին եկեղեցւոյ
տրատու անդամներէն, եւ ընտրուած իւրաքանչիւր անձի անուսին դէմ պէտք
է նշանակէք իր ստացած քուէի թիւը:

Երբ այդ պահանջը լրացնէք այն ատեն Թեմական Խորհուրդը
նկատի պիտի առնէ տարեկան Մխական Ժողովի ընտրութիւնը ներկայացնող
Ձեր տեղեկագիրը եւ ըստ այնմ վաւերացնէ զայն:

Հաղորդելով զայս ի գիտութիւն եւ ի գործադրութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի